«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Նիկարմ ՖԱ» ՍՊԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ nikarm-fc@list.ru

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14.03.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Հենրիկ Խաչատրյան
	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ԱԽ-129
Խախտում՝	Նախախաղային խորհրդակցությանը ուշացումով ներկայանալը (Հավելված 1 Ա, 35-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն
Խաղ՝	«Փյունիկ Ակադեմիա» - «Նիկարմ», 09.03.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

«Նիկարմ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 26-րդ հոդվածը՝ հրահանգել «Նիկարմ ՖԱ» ՍՊԸ-ին խստորեն պահպանել ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի (2023-2024թթ.) պահանջները, այդ թվում՝ ապահովել թիմերի ներկայացուցիչների ժամանակին ներկայությունը նախախաղային խորհրդակցությունների ժամանակ:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։